

ՀՀ Սյունիքի մարզի <<Սիսիանի հ 2 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ -ի կոլեգիալ կառավարման մարմինը՝ խորհուրդը , տնօրենի պաշտոնը զբաղեցնելու համար, հայտարարում է մրցույթ՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշման համաձայն:

Հաստատության տնօրենի ընտրության համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

- 1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը,
- 2) Բարձրագույն կրթությունը,
- 3) ուսումնական հաստատության կառավարման իրավունքը (հավաստագիր):

Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝

- 1) դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով.
- 2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի պատճենը.
- 3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.
- 4) տվյալ հաստատության զարգացման ծրագիրը (ներկայացվում է մրցույթի օրվանից առնվազն երեք օր առաջ).
- 5) հրապարակված հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հաստատող փաստաթուղթը (դրանց առկայության դեպքում).
- 6) աշխատանքային գրքույկի պատճենը:

Փաստաթղթերն ընդունվում են 2021 թվականի հունիսի 7-ից մինչև 2021 թվականի հունիսի 18-ը և սեպտեմբերի 1-ից մինչև 2021 թվականի սեպտեմբերի 7-ը ներառյալ, ժամը 0900-1530-ը, Սիսիանի հ 2 հիմնական դպրոցի շենքում: Հասցե՝ ք. Սիսիան, Շիրվանզադե 7, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Մրցույթը կանցկացվի 2021 թվականի սեպտեմբերի 22-ին ժամը 1200-ին Սիսիանի հ 2 հիմնական դպրոցի շենքում:

Տեղեկությունների համար կարող եք զանգահարել 093-09-57-79 հեռախոսահամարով: